

016:831.99

7-50

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

001

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ Բ Ի Բ Լ Ի Ո Պ Ի Ր Ա Ֆ Ի Ա

(XIX դարից մինչեւ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ)

Կ Խ Ղ Մ Ե Զ
ՀՈՎՀ. ՊԵՏՐՈՍԻԱՆ



ԵՐԵՎԱՆ

Հայկական ՍՍՏ
Պ Ե Տ Գ Ր Ա Պ Ա Լ Ա Տ

1 9 8 3

БИБЛИОГРАФИЯ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ

(С XIX ВЕКА ДО УСТАНОВЛЕНИЯ СОВЕТСКОЙ
ВЛАСТИ В АРМЕНИИ)

Составил
О.В. ПЕТРОСЯН

ЕРЕВАН

ГОС. КНИЖН. ПАЛАТА
Арм. ССР

1 9 5 3

A $\frac{III}{311}$

ԱՌԱՋ ԱՐԱՆ

Այս աշխատության լույս ընծայումով ամբողջացվում և ավարտվում է մեր կազմած «Հայ գրականության բիրլիոգրաֆիան սկզբից մինչև մեր օրերը»:

Այդ ծավալուն գործի առաջին հատորը՝ «Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիրլիոգրաֆիան» լույս է տեսել 1941 թվին, իր մեջ ընդգրկում է V—XIX դարերի գրականությունը, 120 հեղինակների հրկերի նկարագրությամբ և 1600 քննադատական ու քանասիրական նյութերով:

Սրկորդ հատորը «Հայ գրականության բիրլիոգրաֆիային այս գիրքն է, որ ընդգրկում է XIX դարից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումն ընկած ժամանակաշրջանի մեր նոր գրականությունը և ապրիլի 50-ից ավելի հեղինակների հրկերի ու նրանց մասին եղած 7000 քննադատական, գրախոսական և քանասիրական նյութերի բիրլիոգրաֆիան:

Սրկորդ հատորը ընդգրկում է սովետահայ գեղարվեստական գրականության բիրլիոգրաֆիան, որը լույս է տեսել 1949 թվին և իր մեջ ամփոփում է 80 հեղինակների հրկերի ու նրանց մասին եղած 8000 քննադատական ու գրախոսական նյութերի նկարագրությունը:

Այսպիսով, առաջին անգամ է, որ ի մի է հավաքվել և բիրլիոգրաֆիական մշակման է ենթարկվել, թե՛ մեր քաղաքական գրականության ժառանգությունը, և թե՛ սովետահայ գեղարվեստական գրականության ստեղծագործությունները:

«Հայ գրականության բիրլիոգրաֆիան» լինելով հայոց գրականությանը նվիրված, սովետական առաջին մեծածավալ բիրլիոգրաֆիական գործը, ունի որոշ թերություններ: Հիմնական թերությունն այն է, որ այս բիրլիոգրաֆիան, սպառել և լիակատար չէ. հրկար տարիների ընթացքում մշակված բոլոր նյութերը հնարավոր չի եղել հրատարակել, ինչպես անված է բիրլիոգրաֆիայի մյուս հատորների առաջաբաններում, այժմ էլ կրկնում ենք, ներկա հատորն էլ մեր նոր շրջանի գրականության միայն համառոտ բիրլիոգրաֆիան է:

Թերությունների մի զգալի մասը հետևանք է նրան, որ մենք չունենք բիրլիոգրաֆիական բազա: Նախասովետական շրջանում մեր աշխարհիկ գրական-

նությանը նվիրված բիրյիտգրաֆիաներ ընն Հրատարակվել։ Միխիթարյանների կազմած բիրյիտգրաֆիաները արատալիոր են իրենց մեթոդոլոգիական ռեզոլուցիաներով, շատ աղքատիկ սպասկներացում են տալիս մեր աշխարհիկ գրական-նության մասին և, դրան հակառակ, նրանցում գերակշռում է կրոնական-եկեղեցական և դավանաբանական գրականությունը։ Իսկ սովետական տարիներին, եթե չհաշվենք առանձին գրողներին նվիրված մի երկու համառոտ բիրյիտգրաֆիաներ, որոնց լույս են տեսել պարբերականներում կամ մի քանի հեղինակների երկերի հատորներում, դեռ հայ գրականությունը, Հրատարակատնությանը, բանահյուսությունը և կուլտուրայի տարբեր ընդգնահատներին նվիրված բիրյիտգրաֆիաներ ընն Հրատարակվել։ Ձի Հրատարակվել մեր Հարուստ պարբերական մամուլի նյութների բիրյիտգրաֆիան, որ միշտ և բոլորին անհրաժեշտ է։

Իսկ առանց բիրյիտգրաֆիական քաղալի շատ դժվար է կազմել՝ ճշայ դրականության բիրյիտգրաֆիային նման մեծածախվա, ընդհանուր բիրյիտգրաֆիա։ Այդ տեսակետից մեծ փորձ ունի կուտակված ռուսական գրականությունը։ Եթե չհաշվենք 18-րդ դարում եղած փորձերը, հարյուրհիսուն տարուց ավել է, ինչ ռուսներն Հրատարակվում են քաղմաթիվ և քաղմատենակ բիրյիտգրաֆիաներ՝ առանձին գրքերով, ժուռնալներում, քաղմատենակ տեղեկատուների, ուղիցույցների ձևով, էներգիկապես դիտարկում և այլն։ Այնքան հարուստ, այնքան քաղմակողմանի է ռուսական բիրյիտգրաֆիան, որ անհրաժեշտություն է առաջացել Հրատարակելու եւրոպայի աշխատություններ՝ բիրյիտգրաֆիաների բիրյիտգրաֆիաներ։

Պարզ է, որ եթե ռուսական յուրաքանչյուր նշանավոր հեղինակի մասին մի տասնյակից ավելի բիրյիտգրաֆիաներ կան, իսկ ավելի խոշոր գրողների բիրյիտգրաֆիաների թիվը հասնում է 20, 30, 40-ի, ռուսական գրականության ընդհանուր բիրյիտգրաֆիայի կազմումը այնպես ծանր և դժվարին չէ, ինչպես հայ գրականության բիրյիտգրաֆիայի կազմելը։ Հաղթահարելով քաղմատենակ դժվարություններ, երկար տարիներին հետազոտություններ, պրայտումներով, զգուշացնելով ռուսական բիրյիտգրաֆիայի հարուստ փորձից, ղեկավարվելով սովետական բիրյիտգրաֆիայի առաջավոր մեթոդոլոգիայով, մենք աշխատել ենք՝ տալ հայ քաղմաղարան գրականության բիրյիտգրաֆիան, սկսած հետգույն ժամանակներից մինչև մեր օրերը։

Մեր աշխատությունն ենքսա հատորը, ինչպես վերն ասվեց, ընդգրկում է XIX դարից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումն ընկած ժամանակաշրջանի գրականության բիրյիտգրաֆիան։ Հայ գրականության պատմության մեջ քաջատիկ կարևոր տեղ է զբաղում մեր նոր շրջանի գրականությունը։ Այդ շրջանի գրականությունը իւ հիմնական մասով, կրելով ուռտ առաջավոր գրականության բարերար ազդեցությունը, աչքի է ընկնում՝ դադափառական խորությամբ, ժողովրդականությունով, ունակվածով ու գրական կատարելությամբ։ Մեր գրականության նոր շրջանին նվիրված ներկա հատորը, իր ընդգրկած բիրյիտգրաֆիական նյութերով, համոզված ենք, որ մեծապես կօժանդակի ռուսամեծերից հայ գրականության ալդ կարևոր շրջանի պատմությունը և նրա գլխավոր դեմքերի, մեր կյանկներին ժառանգությունը։

Ճշայ գրականության բիրյիտգրաֆիային ներկա հատորը գալիս է մի անգամ ևս հաստատելու, որ միայն իննիներս—Ստալինի պարտիայի ազգային իմաստուն քաղաքականությունը հայ ժողովրդին հնարավորություն տվեց զնա-

Հասեցու իր պատմութիւն լուսավոր էջերը, հրապարակ բերելու իր ազգային հարստութիւնները և ի սպաս զննելու կոմունիզմի կառուցմանը: Նայեց այս բիրիոգրաֆիային և կտեանեց, որ ցարական Թուրանի տնտեսում, մոտ հարյուր տարվա ժամանակաշրջանում, երբ ինչպէս Տարաւ Եւլենկոն է ասել, «...բոլոր ընդունեցով էլ, ամեն ինչ լուր էր...», հայերին շատ քիչ գրքեր են լույս տեսել: Դաշնակցութիւն արյունոտ տիրապետութիւն տարիներին, երբ երկիրը վեր էր ածվել անզու-ամբրիկյան զազութի, իշխում էր սովը և ավերածու-թիւնը, ոչ մի խոտը չէր կարող լինել գրքի և գրականութիւն զարգացման մասին, 1918—1920 թվականներին հրատարակվել է ընդամենը 18 անուն գիրք, այն էլ տպագրական ուղղումներ, հրամաններ...»:

Միանգամայն փոխվում է դրութիւնը Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո:

Հայկական ՍՍՌ-ում, կոմունիստական պարտիայի ղեկավարութիւնը տեղի է ունենում իսկական կուլտուրական ռեւոլյուցիա: Գիտութիւնն ու արվեստը, գրականութիւնը դարձել են ժողովրդի սեփականութիւն: Հայ ժողովրդի պատմութիւն մեջ աննախընթաց լափերով զարգացել է գրքի և պարբերական մամուլի հրատարակման գործը: Սովետական Հայաստանում, 1920—1953 թ. թ. ընթացքում հրատարակվել է 17 հազար անուն գիրք 86 միլիոն ընդհանուր տիրաժով:

Գլխավորն այն է, որ լույս ընծայված գրքերը, ժուռնալները, լրագրերն իրենց դադափարական բովանդակութիւնով, ծառայում են ժողովրդական լայն մասնաների կոմունիստական դաստիարակութիւն զործին:

Հարուստ և վերաշաղկապ զարգացում է ունեցել նաև զեղարվեստական գրականութիւնը: Ստալինյան հնգամյակները բերեցին՝ հայ գրականութիւն վերելք և ծաղկում: 1928—1933 թվականներին հրատարակվել է 405 անուն գիրք, մեկ միլիոն 270 հազար տիրաժով:

1933—1937 թվականներին հրատարակվել է 539 անուն գիրք, երկու միլիոն 460 հազար տիրաժով, 1938—1950 թվականներին հրատարակվել է 1400 անուն գիրք վեց միլիոն տիրաժով:

Ինչպէս եւ Հայ գրականութիւն բիրիոգրաֆիայի ներկա հատորն է ցույց տալիս, մեր կլասիկների, զեմոկրատական ու առաջավոր գրողների երկերը և նրանց մասին եղած գրաքննադատական նյութերը այնքան շատ են, որ նրանց համառոտ նկարագրութիւնն իսկ մի ստվար հատոր է կազմում: Հրատարակվում են մեր կլասիկների երկերի ժողովածուները, անհատութիւն մեջ մեացած անտիպ գործերը, քննադատորեն ուսումնասիրվում է նրանց ժառանգութիւնը և լինիլյան-ստալինյան զնահատման ենթարկվում այն: Հայերենից ՍՍՌ-ի ժողովուրդների ընդունեցով են թարգմանվում մեր գրականութիւն լավագույն ստեղծագործութիւնները:

Ներկա հատորի նպատակն է՝ ի մի ամփոփելով ու բիրիոգրաֆիական մշակման ենթակցելով մեր նոր շրջանի գրականութիւնը՝ բիրիոգրաֆիական ուղեցույց ծառայել մեր գրականագետներին, ուսուցչութիւնը, ուսանողութիւնը ու ընթերցող մասնաներին:

Ահւրաժեշտ ենք համարում մի քանի բացատրութիւններ տալ այս հատորի մասին:

1. Հայ գրականութիւն բիրիոգրաֆիայի, ինչպէս մյուս երկու հատորները, այնպէս և ներկա հատորը, ուսական բիրիոգրաֆիայի լավագույն աշ-

խատույթունները օրինակով, կառուցված է անհատ հեղինակները (պետական-
(իս) բերլիոգրաֆիաների հիմունքով: Բայց հաշվի առնելով նախկին հատոր-
ների մասին ելած քննադատական դիտողությունները և այն փաստը, որ հայ
հրապարակախոսության, գրականագիտության և ֆուկլոթի վերաբերյալ բեր-
լիոգրաֆիաներ չկան (իսկ այդ նյութները կարևոր են և առնչվում են գեղար-
վեստական գրականության բերլիոգրաֆիայի հետ), ներկա հատորում, հավել-
վածները բաժնում, մենք որոշ նյութեր ենք մտքով՝ գրականության պատմու-
թյան, ֆուկլոթի, հրապարակախոսության ու քննադատության բնագավառնե-
րից: Բայց պարզ է, որ դրանցից յուրաքանչյուրը մի կարևոր և խոշոր թեմա է,
որ հետազայում պիտի մշակման ենթարկվի և հրատարակվի առանձին, ինչ-
պես կատարվում է Սովետական Միության բերլիոգրաֆիական հիմնարկ-
ներում:

2. Հեղինակները դասավորված են այբբենական կարգով, Յուրաքանչյուր
հեղինակի բերլիոգրաֆիա ունի հետևյալ բաժինները՝ 1. նրկերի հրատարա-
րակությունները (առանձին գրքերով), 2. պարբերական մամուլում եղած ստեղ-
ծագործությունները, հոգվածները, 3. քննադատական, գրախոսական և այլ
նյութեր հեղինակի մասին, 4. հեղինակի երկերի թարգմանությունները և նրա
կատարած թարգմանությունները: Այդ բաժինների ներսում նյութը դասավոր-
ված է ժամանակագրական կարգով, որպեսզի օգնի ընթերցողներին՝ ուսում-
նասիրելու հեղինակների ստեղծագործական կյանքի ուղին:

3. Հայտնի է, որ Սովետական Միության ժողովուրդների լեռնայան-օտա-
ւիայան քաղաքակրթության պայմաններում, ռուս մեծ ժողովուրդը խորը հար-
գանքով է վերաբերվում դեպի ՍՍՄԿ-ի բոլոր ժողովուրդների կուլտուրան,
տասնյակ հազարավոր տիրաժներով ուսանող են թարգմանվում և հրատա-
րակվում հղբայրական ժողովուրդների հոգնկտ մշակութի գանները: Մեծ լա-
սիների է հասնում նաև հայ գրականության հրատարակությունը ուսանող լեզ-
վով, օր-օրին անում են հղբայրական մյուս ժողովուրդների լեզուներով հայ
գրականության թարգմանությունները:

Ահա, ի նկատի ունենալով այդ հանգամանքը, մենք աշխատել ենք տալ
հայ գրականությունից կատարված թարգմանությունները: Հայ հեղինակների
երկերի ուսանող թարգմանությունները, նույնպես և հղբայրական ժողովուրդ-
ների գրականությունից հայ հեղինակների կատարած թարգմանությունները,
հիմնականում ընդգրկել ենք, իսկ ինչ վերաբերում է հայերենից հղբայրական
ժողովուրդների լեզուներով (նաև օտար լեզուներով) կատարված թարգմանու-
թյուններին, մեզ չի հաղողվել ընդգրկել, այդ բանը կարելի է վերացնել ներ-
կա աշխատության վերահրատարակության ժամանակ:

4. Բերլիոգրաֆիական նկարագրության մեջ մենք աշխատել ենք պահպա-
նել միասնական մեթոդը, սովետական շրջանի բոլոր նյութերը մշակված են Սո-
վետական Միության մեջ ներկայումս կիրառվող բերլիոգրաֆիական միասնա-
կան կանոնների համաձայն:

Բայց ինչ վերաբերում է նախասովետական ժամանակաշրջանի նյութե-
րին, դրանց մի մասը (գրքեր, ամսագրեր ու թերթերի համարներ) մեր գրա-
դարաններում չեն եղել և կամ այդ նյութերը վերցրված են առանձին ուսում-
նասիրողների, քանասերների հոգվածներից, հնարավոր չի հղել բերլիոգրա-
ֆիական բոլոր կանոնները պահպանել, որոշ ցուցանիշներ բացակայում են
(օրինակ, գրքերի արբաժը, շափը, գինը. կամ՝ հոգվածների հեղինակը, լրիվ

վերնագիրը կա, նշված է ամսագրի կամ լրագրի անունը, տարեթիվը և համարը, բայց բացակայում են էջերը)։

Այդ բոլորը շին արգելակում սովյալ աղբյուրի գտնելուն և օգտագործելուն, եթե չի տրված ամսագրի էջերը, համարով կարելի է գտնել այդ նյութը։

5. Իրո՞ւ կանոն, զբո՞ղբը, հոգւմածները նկարագրելիս մենք սովել ենք անտաքիաներ, որոնք նպատակն է բացահայտել թեմատիկան, ժանրը և այլն։ Ինչպե՞ս ընդունված է սովելտական բիբլիոգրաֆիայի մեջ, առանձին զբո՞ղբ, երկերի ժողովածուների բովանդակությունը տրված է մանրամասն, որպեսզի ուսումնասիրողները, հետազոտողները կարողանան գտնել իրենց անհրաժեշտ նյութերը։

6. Բիբլիոգրաֆիական մշակման ենթարկված մեծաքանակ նյութերից ընթերցողներին օգտվելը դյուրացնելու նպատակով կազմել ենք՝ հեղինակային և աղբյուրների ցանկեր։

Վերջացնելով մեր համառոտ դիտողությունները, անհրաժեշտ ենք համարում ասել, որ երկար տարիների համառ և քառաշառ աշխատանքի արդյունք է աշայ գրականության բիբլիոգրաֆիան։ Համազված ենք, որ նյութերի համեմատաբար ընդարձակ ընդգրկումը և սովելտական բիբլիոգրաֆիայի մեթոդներով այդ նյութերի մշակումը, կօժանդակեն մեր՝ գրականագետներին, ուսուցչ-չությանը, ուսանողներին և ընթերցող մասսաներին՝ ուսումնասիրել հայոց գրականության նոր շրջանը, մեր կլասիկների գրական ժառանգությունը և կնպաստի հայ գրականության գիտական, մարքս-լենինյան սրտումբյան ստեղծմանը։

ՀՈՒՂ. ՊԵՏՐՈՍԱՆ

Ն Ե Ր Ա Շ ՈՒ Թ Ե ՈՒ Ն

ՀԱՅ ԿՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

I

Հայ ժողովրդի հարուստ գրականությունը դարերի պատմության ունի մովեցական տարիներին հսկայական աշխատանք կատարվեց այդ գրական ժառանգությունը մասանների սեփականությունը դարձնելու և այն գնահատելու գործում:

Սակայն, չնայած այդ նվաճումներին, հայ գրականության պատմության մարցսիտական-լենինյան ուսումնասիրության ասպարեզում նկատելի են յուրյ թերություններ ու սխալներ: Մենք համարյա չունենք մոնոգրաֆիկ հետազոտություններ ոչ միայն միջնադարյան հայ գրականության կարևոր հարցերի, այլև նոր շրջանի գրականության նշանավոր շատ դեմքերի մասին: Զկան համապատասխան ժողովածուներ, և նույնիսկ թիրիոգրաֆիաներ: Այս անուամով նախապատրաստական աշխատանքի, նյութեր հավաքելու և կուտակելու ասպարեզում արված յուրաքանչյուր դրական փորձ պետք է ողջունել հենց միայն նրա համար, որ դրանք անհրաժեշտ լսփով կարող են հեշտացնել հայ գրականության մարցսիտական պատմությունն ստեղծելու:

Հայտնի է, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտի այդ ասպարեզում կատարած փորձերը չունեցան դրական արդյունք: Դեռևս 1941 թվին դպրոցների համար հրատարակած «Հայ գրականության պատմության» դասագրքի մեջ տեղ էին գտել նացիոնալիստական կարգի սխալներ: Այդ ուղղությամբ կատարած երկրորդ փորձը, 1949—50 թվականներին հրատարակած «Հայ գրականության պատմության» ստեղծված դարձյալ գրականության ինստիտուտի գիտաշխատողների կողմից կողմից, նույնպես զաղափարական տեսակետից հանաչվեց անընդունելի և Հայաստանի կամուխատական պարտիայի 16-րդ համագումարում քննադատվեց ամբողջական հոսանքի արատավոր կոնցեպցիայի ռեցիդիվներ պարունակելու համար:

Նոր Հայ գրականագիտության պատմության հարցերը վերագնահատում ենք պարտական որոշումներին և հատկապես պարտիայի 19-րդ համագումարի որոշումներին լույսի տակ, նկատում ենք իդեոլոգիական ընդլիկ լուրջ սխալներ ու աղավաղումներ:

Իդեոլոգիական աշխատանքի անբավարար զննվածության և նրա քովանդակության նկատմամբ վերահսկողության բացակայության պատճառով,— ասաց ընկ. Գ. Մալինկովը պարտիայի 19-րդ համագումարում,— Հանձնադրություն, թերթերում և ժողովներում, գիտական և իդեոլոգիական այլ հիմնարկների գործունեության մեջ, թույլ են տրվում լուրջ սխալներ ու խեղաթյուրումներ:

Իդեոլոգիական լուրջ սխալներ ու, խեղաթյուրումներ տեղ են դրել նաև Հայաստանում հրատարակված առանձին գրքերում և գիտական որոշ հիմնարկների գործունեության մեջ:

Գիտությունների ակադեմիայի հրատարակած «Հայ գրականության պատմության» դարցակազմի դասագրքը, որի մասին խոսք եղավ վերևում,— այդ մասին է խոսում: Բայց հարցը միայն դասագրքով չի սահմանափակվում: Պետք է նկատել, որ իդեոլոգիական կարգի սխալներ են թույլ տրված պրոֆեսոր Արսեն Տերտեմյանի Հայ գրականությանը նվիրված աշխատություններին, հատկապես «Հայ կյանքներ» և «Ե» Արվյանի ստեղծագործությունները զբաղվածքների մեջ:

Ա. Տերտեմյանը փորձելով հաղթահարել Հայ գրականության պատմության մասին ՅՅ-ական թվականներին ունեցած վուլգար ժողովրդական կոնցեպցիան, այդ նոր աշխատություններում, ընդամենը դրական կողմերին, ընկավ այլ ժայռահողմի վրա մեջ և գրական ու քաղաքական տարբեր հոսանքների առանձին ներկայացուցիչներին միջև արհեստական մոտեցումներով ստեղծեց, արտահայտելով նրանց ղեկավարող դրժնելու անդեմ:

Խոսելով, օրինակ, կանանց հարցի նկատմամբ Գյոթեի և Մ. Գորկու հայացքների մասին («Հայրենասեր կինը Մերենցի վնասում է հողվածում» պրոֆ. Տերտեմյանը գրում է. «Գյոթեի և Մաքսիմ Գորկու այս վեճի մեջ Մերենցի համակրանքը վերջինիս կողմն է, եթե հայրենասիրությամբ նա նախանշանական է, կենսասիրությամբ՝ գործիական»:

Այսպիսի արատավոր հարցադրումները խանգարում են Հայ գրականության գիտական պատմություն ստեղծելու գործին: Մեր ցնհադատությունը դեռ անհրաժեշտ խորությամբ չի քննադատել հանդուրժյալ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» երկնատոր աշխատության կոնցեպցիան: Այդ աշխատությունը, պարունակելով հանդերձ հարուստ և արժեքավոր նյութ Հայ հին և միջին դարերի գրականության պատմության մասին, չի տալիս այդ գրականության զարգացման գիտական կոնցեպցիան: Ավելին. հեղինակը չենելով արատավոր սկզբունքից, Հայ գրականության պատմությունը 5-րդ դարից մինչև 10-րդը ներառել, համարում է թեկնեցաքաղաքական մտցուման, այսինքն արտաքին թշնամու դեմ ուղղված գրականություն, հիմնականում անտեսելով այն պատմական իրողությունը, որ այդ շրջանի գրականությունը՝ հոգևոր և աշխարհիկ, անդադարձիվ է նաև ներքին դասակարգային պայքարը:

Հայ գրականության պատմության ռազմասիրությանը նվիրված այդ աշխատությունների արատավորությունը ցույց է տալիս, որ մեր ախպ և երի-

տասարդ գիտնականներից ոմանք ղեռ չեն կարողացել ազատագրվել անցյալի տրամադրիչ տնտեսագործության ու գրականագիտության հակագիտական կոնցեպցիաների ազդեցություններից և այս ու այն ձևով տուրք են տալիս այդ մտայնությանը՝ «միասնական հոսանքի» ոնցիդիվներին:

Այս հարցերի շուրջը Գիտությունների ակադեմիայի հասարակական բաժանմունքի կազմակերպած դիսկուսիաները և պարտիական մամուլի քննադատությունը իրոք քաջաշայտեցին լուրջ սխալներ մեր պատմագրության և գրականագիտության ասպարեզում: Միայն այդ դիսկուսիաների ընթացքում, «միասնական հոսանքի» ոնցիդիվներին դեմ պայքարելու դորշի տակ, թույլ տրվեցին և ծայրահեղություններ, որոշ ընկերներ հանդես բերեցին նացիոնալ-նեոխիստական վերաբերմունք՝ անցյալի մի շարք գործիչների և գրողների ժառանգությունը զնահատելիս:

Հայ գրականության դիտական պատմությունը ստեղծելու համար անհրաժեշտ է խորը ուսումնասիրել լենինյան-ստալինյան ուսմունքը և այն կիրառել մեր իրականության նկատմամբ: Հայտնաբերված այդ սխալներն ու խեղություններն առաջ են գալիս նրանից, որ մեր գիտական ու քննադատական կադրերն անհրաժեշտ խորությունից չեն տիրապետում մարքս-լենինյան ուսմունքին և դեռևս չեն կարողացել լիովին ազատագրվել անցյալի տրամադրիչ տնտեսագործության ու գրականագիտության ազդեցությունից:

Հայ գրականության պատմությունը բաժանվում է երեք հիմնական շրջանների՝ ա) հին և միջնադարյան գրականություն, որն ընդգրկում է 5-րդ դարից մինչև 18-րդ դարի վերջը և 19-րդ դարի սկիզբը, բ) նոր շրջանի հայ գրականություն, որն սկսվում է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց, այսինքն 18-րդ դարի 20-ական թվականներից և շարունակվում է մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը և գ) հայ գրականության սովետական շրջան:

Այս երեք հիմնական շրջաններից յուրաքանչյուրն ունի իր զարգացման առանձնահատկություններն ու նախադրյալները և իր հերթին կարող է բաժանվել ենթաշրջանների (պերիոդների):

Մեզ ներկա ղեպքում հետաքրքրում է նախասովետական շրջանի հայ գրականության պատմության հարցերը, հատկապես նոր շրջանի հայ գրականության ժառանգության զնահատության հարցը:

II

Մեր նպատակն առաջին ժառանգության մեկնաբանության հարցում ղեկավարվել ու ղեկավարվում է կուլտուրական ժառանգության քննադատական լուրաքմառ և թերկու ազգային կուլտուրաների լենինյան-ստալինյան ուսմունքով:

Դեռևս 1913 թ. լենինը գրում էր. «Երկու ազգ գոյություն ունի յուրաքանչյուր ժամանակակից պպություն մեջ, կասե՛ք մենք բոլոր նացիոնալ-սոցիալիստներին: Երկու ազգային կուլտուրա գոյություն ունի յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ»:

«Յուրաքանչյուր ազգային կուլտուրայում կա, թեկուզ լզարգացած, դեմոկրատական և սոցիալիստական կուլտուրայի տարբեր, որովհետև յուրաքանչյուր ազգի մեջ կա աշխատավոր և շահագործվող մասնա, որի կյանքի պայմաններն անխուսափելիորեն ծնունդ են տալիս դեմոկրատական և սոցիալիստական իդեոլոգիայի: Բայց յուրաքանչյուր ազգի մեջ կան նաև բուրժուա-

կան (իսկ մեծ մասամբ նաև սեհաբյուրակային ու կղերական) կուլտուրա և այլն էլ ոչ թե ստարերերին միայն, այլ տիրապետող կուլտուրայի ձևով (Եսեկո, հատ. 26, էջ 9—10)։

Հայ դրականության գիտական պատմության համար պետք է հիմք ընդունել լեռնինյան այս ուսմունքը և ղեկավարվել նրանով։ Միինչեզե լեռնինյան այդ ուսմունքին հակադրվում էին Երկու, առերես տարածքով, բայց ըստ էության իրար լրացնող ուղղություններ, բացարձակ նացիոնալիստական և նացիոնալ-նիհիլիստական։

Նացիոնալիստական հայացքի կրողները հայկական կուլտուրական ժառանգությանը նայում էին որպես մի գեթասեական ամբողջականություն և անքննադատորեն էին վերաբերվում դեպի այն ամենը, ինչ հայկականն էր, «ազգային», ժխտելով որն է դասակարգային գիշերահեղափոխ, կամ շեղումներում՝ հայ ազգի ու նրա կուլտուրական ժառանգության մեջ։ Միինչեզե նացիոնալ-նիհիլիզմի ներկայացուցիչները հաճախ քողարկելով իրենց հակալեռնինյան մոտեցումը՝ գծախոս ուլտրա-ոսկրոցիտն ֆրազներով, կաշվից դուրս էին գալիս ապացուցելու, որ հայ-կուլտուրական ողջ ժառանգությունը ներծծված է թթու նացիոնալիզմով, չովինիզմով և արժանի է լիակատար մերժման ու ժխտման և որ այս ժառանգությունից սովորելու ոլիկ չունի սովետական արվեստագետը։

Ընդդրում ժխտում էին ու միայն հին ու միջին դարերի ամբողջ կուլտուրական արժեքները, այլև 19-րդ դարի ու 20-րդ դարի սկզբի հայ դրականության ու արվեստի խոշորագույն ներկայացուցիչների ստեղծագործությունները՝ առանց էական խտրության։

Այսպիսի համատարած ժխտողական վերաբերմունքը ազգային կուլտուրական ժառանգության նկատմամբ, արհեստականորեն հրահրում էր նացիոնալիստական տրամադրություններ և նպաստում նացիոնալիստների դիրքերի ամրացմանը և խանգարում սովետական՝ ձեռով ազգային, բովանդակությամբ՝ սոցիալիստական կուլտուրայի զարգացմանը։ Պարտիան ժամանակին դադարեցնել է թե մեկ և թե մյուս հակալեռնինյան մտայնության արտահայտությունները։

Հայ դրականության պատմությունն ըստ էության հանդիսանում է շահագործող ու շահագործվող դասակարգերի պայքարի արտահայտություն։ Դեմոկրատական (աշխատավորական) շերտերի տրամադրությունները արտահայտող գրողները՝ հին ու միջին դարերում, այս ու այն ձևով, հակադրվում էին իշխող դիրք ունեցող կղերական հոսանքի ներկայացուցիչներին, իսկ նոր շրջանում՝ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբում՝ բուրժուական լիբերալիզմին ու ռեակցիոն-նացիոնալիզմին։

Դեմոկրատական հոսանքը, որ հիմնականում արտահայտում էր գյուղացիական մասսաների տրամադրությունները, այդ նոր շրջանում հակադրվում է լիբերալիզմին ու տիրող կարգերին՝ ծրեմն ոսկրոցիտն (Միքայել Նալբանդյան, Հակոբ Պարոնյան և այլն), իսկ շատ հաճախ պասսիվ ընդդիմության ձևով (Ղ. Աղայան, Հովհ. Թումանյան և այլն), կամ էլ հանգես էր գալիս կրոնական կնդրի մեջ (Պ. Պոռյան, Մուրադյան և այլն)։

Իսկ պրոլետարիատի պատմական բնի հանգես գալու մոմենտից սկսած լիոնիզմ է պայքարող ուժերի հարաբերությունը և հայ դրականության ու հասարակական մտքի զարգացումը հիմնականում պայմանավորվում է երկու

հակադիր դասակարգերի, բուրժուազիայի և պրոլետարիատի և նրանց աշխատակցների՝ բուրժուական և սոցիալիզմի ու պրոլետարական ինտերնացիոնալիզմի պայքարով:

Բաժնեկան է հիշել այս սխառեքը, որպեսզի պարզ լինի ամբողջ վտանգավորությունն այն խորթ թշնամական հռահրանների՝ Նացիոնալիզմի և Նացիոնալ-նեֆրիզմի, որ արտահայտվել է ժառանգություն և հարցի նկատմամբ, Այդ հակամարտությանական վերաբերմունքը, ինչպես հիշեցինք վերևում, ունեցել է իր ռեցիդիվները և մեր օրերում, որի դեմ և պայքարում է պարտիան:

Շարունակելով անհաշտ պայքարը Նացիոնալիստական տրամադրությունների ռեցիդիվների, ինչպես նաև Նացիոնալ-նեֆրիզմի առանձին արտահայտությունների դեմ, սովետահայ գրական-քննադատական կադրերը, պարտավոր են լինելին—ստալինի ուսմունքի լույսի տակ արժեքավորել ու դնահատել հայ ժողովրդի հարուստ կուլտուրական ժառանգությունը:

Եթե հարուստ է մեր հին գրականությունը, որով մենք իրավացիորեն պարծենում ենք, ապա ոչ պակաս հարուստ և քարծր է մեր նոր գրականությունը ստեղծված 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբում, Միևնույն ժամանակաշրջանի գրականությունը եղել է խորապես թերազնահատված, որը առումով անվտանգված է, նույնիսկ այնպիսի գրող, ինչպիսին Վահան Տերյանն է, ազգային սեմինարիզմի դեմ պայքարելու դոզի տակ, մեր նոր գրականությունը, բացառությամբ ասանձին դեմքերի, անվանարկել է, ասելով. «Մեր գրականությունը, սկզբից մինչև մեր օրերը գաղափարական, կիսագրգռական գրականություն է եղել, չնայած այն հանգամանքին, որ նրա ծագումը եղել է մեծ քաղաքներում, կուլտուրական կենտրոններում» (Ծրկեր, հատ. 4, էջ 139):

Նման վերաբերմունքն արատավոր է իր հիմքում: Թերևս հակառակ Վ. Տերյանի սուրբնությունից ցանկությունը, նրա այդ մոտեցումը փաստորեն ջուր էր լեցնում բուրժուական-կղերական քննադատության ջրաղացին: Վերջինս ազգային սնապարծությունով տարված ոռնահարում էր հայ նոր գրականությունը, նրա ոնալիզմը և նրա կապիտալությունը աշխատավորական մասնաճյուղի հետ, հակադրում նրան միջնադարյան հայ գրականությունն ու պոեզիան:

Պատահականություն չէ, որ այդ տրամադրությունը՝ նորի թերազնահատումը՝ միջնադարյան գրականության համեմատությամբ, իր արտահայտություն է գտել նաև Վ. Բրյուսովի ժալկական պոեզիայի անթուղիայի հայտնի առաջադրումում, Այդ տնեղենցիկ տուրք են տվել և շատ այլ գրողներ ու գրականագետներ, որոնք, այս ու այն առիթով, խոսել են հայ գրականությունից մասին, կամ համեմատել են մեր միջնադարյան ու նոր ջրբանի գրականությունները: Ըստ որում մեծարվել է ոչ այնքան միջնադարյան գրականություն մեջ եղած առաջադիմական տնեղենցիները, վերածնունդի մոտիվները, որքան կրոնական միտախկ տրամադրությունների արտահայտությունները, այդ բոլորը ներկայացնելով որպես մեր գրականության ժողովրդի:

Քարծր զնահատելով մեր միջնադարյան պոեզիան, նրանք չէին տեսնում և չէին կարող տեսնել այն մեծ ավանդը, որ մտքերը են հայ կուլտուրայի գանձարանը՝ 19-րդ դարի հայ խոշոր գրողները և այն ներքին կայք, որ կա այնքան չորանների գրականությունների միջև: Իր բոլոր լավագույն հատկություններով՝ գաղափարական խորությամբ ու ձևի կատարելությամբ, ժողովրդի հետ ունեցած կապով ու տրամադրությունների արտահայտությամբ, նրան՝ մոտ ու մասնակի լինելով, հայ նոր գրականությունը անհամեմատ քարծր է ու

արժեքավոր, նա իսկական ժողովրդական գրականություն է և ծնվել է ազատագրական պայքարի ոգուց, անդրադարձել է ուսման մեծ գրականության բարերար ազդեցությունը, Հայ գրականության մարտիտական պատմությունն առաջին հերթին պետք է վերանայի վերը նշված տրագիցիան, ըստ էության հակապատմական ու հակագիտական տեսակետը՝ մեր գրականության զարգացման պրոցեսներին, նրանց տարբեր շրջաններին բնույթի մասին:

Որո՞նք են եղել մեր նոր գրականության զարգացման հիմնական նախադրյալները:

Հայ ժողովուրդն իր գոյության ամբողջ ընթացքում, շնայած օտարերկրյա հափշտակիչներին հաճախակի անպատակություններին, թափանցելու ու ավերածություններին և ներքին օրոցիալական շահագործման, վառ է պահել ստեղծագործական հուրը և կերտել է հոգևոր կուլտուրայի այնպիսի արժեքներ, որոնցով այսօր հիանում է կուլտուրական աշխարհը: Նա իր լուսման է մտցրել մարդկության կուլտուրայի գանձարանը դեռևս անգույն շրջանից սկսած:

Հայ ժողովրդի և նրա հոգևոր կուլտուրայի պատմության մեջ նոր գաղափար է բացվում 19-րդ դարի սկզբներին, երբ Արևելյան Հայաստանը միացվում է ռուսական կայսրությանը: Դա պատմականորեն մի պրոգրեսիվ քայլ էր հայ ժողովրդի համար: Պրոգրեսիվ այն իմաստով, որ հայ ժողովուրդը մշտական շփման մեջ էր մտնում ռուս մեծ ժողովրդի հետ և կրում էր նրա պայքարի ու առաջավոր կուլտուրայի բարերար ազդեցությունը:

Այդ նոր իրադրության պայմաններում հայ գրականությունը մինչ այդ լսեցված զարգացման է հասնում, ճիշտ այնպես, ինչպես այդ շրջանը գտնուում է ռուս գրականության բազմազան տաղանդների դրսևորման տեսախելքից մի շրջան: Ռուս գրականության արագ զարգացման հիմքում ընկած էր Ռուսաստանում հասունացող սնույալից, ժողովրդի պայքարն իր պաշտոնական ու մարդկային իրավունքների համար: Վիշ ոք նվրոպայում,— ասում է Գորկին 19-րդ դարի ռուս գրականության մասին— չի ստեղծել այնքան լքնաղ գեղեցկություն, որպիսի աննկարագրելի ծանր պայմաններում... ոչ մի տեղ, ոչ լրիվ հարյուրամյակի ընթացքում չի երևացել մեծ անունների այդքան պայծառ աստղադուլ, ինչպես Ռուսաստանում:

Այդ նույն շրջանում իր բուռն վերելքն է ապրում նաև հայ գրականությունը: Պայքարը օրոցիալական և ազգային ճնշման դեմ՝ եղել է այն հիմնական ակունքը, որից սնվել են հայ գրականության խոշորագույն ներկայացուցիչները: Այդ պայքարը ոգեշնչել է հայ գրողներին՝ ստեղծագործելու իրենց լավագույն գործերը, որոնք համակված են խորը հայրենասիրությամբ և ժողովրդայնությամբ, լավագույն ազգային և ազգային վառ հույսերով: Իրենց երկերում այդ վեհ զգացմունքներն են արտահայտել տարբեր զաղափարական դիրքերից՝ Խ. Աբովյանը և Միք. Նալբանդյանը, Հակոբ Պարոնյանը և Գ. Սեմերդյանը, Աղայանը և Պարոնյանը, Բաֆֆին և Շիրվանզադեն, Նար-Դոսը և Թումանյանը, Խաչատրյանը և Հակոբ Հակոբյանը և ուրիշները:

Սոցիալական ու ազգային ճնշման ծանր պայմանները չեն ընկնել ժողովրդին, նրա պայքարի կամքը, այլ ամրապնդել են նրա ընդդիմադրական ուժը: Այդ պայքարն իր արտացոլումն է գտել հայ գրականության մեջ:

19-րդ դարի հայ գրականության այդպիսի արագ և ուժեղ զարգացման համար, բացի ժողովրդի անմիջական կենսական ձգտումներից ու պայքարից, կարևոր դեր է խաղացել նաև ռուս ժողովրդի մեծ գրականությունը, որը 19-րդ

դարի վերջերին ու 20-րդ դարի սկզբներին, բուլեիկ Ա. Սպանդարյանի խոսքերով ասած՝ «արդեն եվանջել ու հնադանգեցիքն էր ամբողջ աշխարհը», դարձել համաշխարհային կուլտուրայի զարգացման կարևորագույն ազդակներէջ մեկը։ Ռուս գրականութիւնն իր սոցիալական ու զաղափարական բովանդակութեամբ, իր հումանիզմով ու հայրենասիրութեամբ, արվեստի ու ժողովրդի մտայնութեամբ, վաղուց արդեն ճանաչված էր որպէս աշխարհի ամենաստույգագիտը ու ազնուիցի կրականութիւնը։ Նա ծնվել է պայքարի ոգով, — իրավաբանութեան գրում է Ռուզա Լյուսնմարտիզը և ավելացնում. «Միտա գրականութիւնը ցարկովի իշխանութեան ներքո դարձել է, ինչպէս և ոչ մի երկրում և ոչ մի ժամանակ չի եղել, հասարակական կյանքի հղոր ուժն էր դիրքում մնացել է մի ամբողջ դար, մինչև որ նրան փոխարինել է ժողովրդական մասնաների նշանակալի հղորութիւնը, մինչև որ խոսքը դարձել է գործ։ Հենց զինքնաշարժական գրականութիւնն է, որ կիսապետական, բռնապետական պետութեան համար տեղ է եվանջել համաշխարհային կուլտուրայում, ճնշող է ինքնակալութեան կառուցած լիակալական պարսպը և կամուրջ է անցկացրել Արմատի և Ռուսաստանի միջև, որպէսզի հանդես գա այնտեղ ոչ միայն իրեն վերջնադ, այլ իրեն տվող, ոչ միայն որպէս աշակերտ, այլև որպէս դաստիարակ։

Այնչա՛ղ դարում և մեր դարի սկզբներին Հայաստանում ուսումնասիրում էին Ենթակիթի, Գլոբի, Երկրի, Բայրոնի, Բալզակի, Հայնէի, Վերհարնի և եվրոպական ուրիշ շատ գրողներին։ Բայց հայ գրականութեան ամենանշանակալի, ամենաառաջավոր մասը, ռուսահայերի գրականութիւնը, — ձևավորվել է ռուս այդ մեծ գրականութեան անմիջական և ուժեղ ազդեցութեան տակ։

Անկախ նրա ներգործութիւնը լատինականից միայն ռուսահայերի շրջանակներում, այլ վերջիններիս գրականութեան միջոցով, առաջավոր ռուս միտքը զգալի ազդեցութիւն ունեցած է նաև արևմտյան, պիսակորապետ թուրքահայերի մտավոր կյանքի, նրա առաջավոր ներկայացուցիչների գործունեութեան վրա։ Նրանցից մի մասը, լքելով բունակալական թուրքիան, ապաստան է գործունեութեան վայր է ընտրել Ռուսաստանը և այստեղ ծավալել իր ընդունակութիւններն ու կարողութիւնները։ Հիշենք, որպէս բնորոշ փաստ, անմոռանալի արտիստ և գրող Պետրոս Աղամյանի գործունեութիւնը։

Սկսած Արմատից ու Նայրոնից մինչև պրոլետարական բանաստեղծ Հակոբ Հակոբյանը և սովետահայ երիտասարդ գրողները, շարունակ զգացվել և, զգացվում է ռուս գրականութեան բարերար և հզոր ազդեցութիւնը։ Իրանի ստեղծագործութիւնների վրա։

Պուշկինը, Գոգոլը, Բելինսկին, Նեկրասովը, Չերնիշևսկին, Տուրգենևը, Տոլստոյը, Զեյնովը, Գորկին, Մայակովսկին և ուրիշները, եղել են և մնում են որպէս հայ ժողովրդի սիրված գրողներ։

Խոսելով ռուս գրողների ազդեցութեան մասին, հայ նշանավոր բանաստեղծ Ա. Մատուրյանն ուղղակի հայտարարել է. «Դժվար է նշել մեր գրողներից որեւէ մեկին, որն այն կամ այն կերպ ընկած լինի այդ ազդեցութեան տակ։ Իմ համեստ քնարը շատ ու շատ բանով պարտական է այդ ազդեցութեանը»։

«Տարակուս չկա, որ ես շատ բանով պարտական եմ եղել ռուս գրականութեանը, հատկապէս նրա պատմողական ճշտութեան, որն ի դեմս նրա լայնագիտի ներկայացուցիչների, ես շատ բարձր եմ դասում միուս բոլոր ժողովրդների պատմողական ստեղծագործութիւններից — գրել է հայ նշանավոր ռեալիստ վիպասան Նար-Դուրը։

օնս գտել էմ, որ ռուս բանաստեղծները, գլխավորապես Պոլչկինը և Ներ-
մոնտովը,— միշտ շատ ավելի հարազատ ու մոտիկ են թվացել ինձ, քան մեր
հայ բանաստեղծները (խոսքը վերաբերում է նախորդ սերնդի հայ բանա-
ստեղծներին)։... Ո՞րտա բանաստեղծներն ինձ տվել են նույնիսկ պոեմի բույն ձևը,
որպիսին կրում են իմ սանդղատգործություններից շատերը—ասել է հայ մեծա-
դույն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը։

Այսպիսին են երկու ժողովուրդների պատմական գրական կապերը, Գրի-
բոնդովի թեև լիքից պատուհաս—ը առաջին անգամ բեմադրվել է հայ բեմի
վրա։ Գրգուրը, Ստրովսկին, Գորկին եղել ու մնում են Հայաստանում սիրված
դրամատուրգներ, նրանց պիեսները չեն իջնում ազգային թատրոնների բե-
մերից։

1841 թվականին Պետերբուրգում Գ. Ստրովսկյանն առաջին անգամ տեսել
է Կարատազինի խաղը, հիացել ռուս նշանավոր դերասաններ Մառտինովի և
Եշնպկինի ստեղծած կերպարներով, նա միշտ կրկնում էր, որ թթատրոնը սի-
րելու համար ինքը շատ բանով պարտական է Գրգուրին։

Որկու ժողովուրդների կուլտուրական կապերը պատմական խոր արմատ-
ներ են ունեցել և չեն սահմանափակվել միայն գրականության ու արվեստի
շրջանակներով։ Ո՞ր միայն գրողները, նկարիչներն ու կոմպոզիտորները, այլև
հայ ժողովուրդն ինքը, նրա առաջավոր ինտելիգենցիան նշանակալի չափով
դաստիարակվել են ռուսական առաջավոր կուլտուրայի տրագիգիաներով։

Սակայն հայ գրականությունը իր մեջ ներթնելով ռուսական ու եվրոպա-
կան առաջադեմ գրականության ազդեցությունը, լի ընդգրկեցին նրանց, նա
եղել է միանգամայն ինքնուրույն և ինքնատիպ, ունեցել է իր ազգային դի-
մանկությունը՝ նա վառ ցույցներով արտացոլել է ժողովրդի կենցաղն ու բարքե-
րը, նրա ձգտումները և ազատության համար մղած պայքարը։ Հայ գրակա-
նության ինքնատիպությունը և բարձր գեղարվեստական արժանիքները կառ-
կածից դուրս է։

Հայ գրականության ինքնուրույնությունը և բարձր գեղարվեստական ար-
ժեքն ընդունել է ռուս խոշոր բանաստեղծ և գիտնական Վլադիկ Բրյուսովը
և պրոֆեսորական մեծ գրող Մաքսիմ Գորկին, որի խմբագրությամբ դեռևս 1916
թվականին ռուսերեն լեզվով լույս տեսավ «Հայ գրականության ժողովածուն»։

Հայ ժողովրդի և նրա կուլտուրայի մասին Բրյուսովն ասել է. «Բնատի աղ
բուր փոփոխությունների, իրենց պատմական կյանքի հաղարածականների ըն-
թացքում հայերն ստեղծել են ինքնուրույն կուլտուրա, իրենց ավանդը մուծել
գիտության մեջ, և աշխարհին թողել ամենահարուստ գրականություն»։

Մեծ է Մաքսիմ Գորկու դերը հայ գրականության զարգացման գործում։
Նրա ազդեցությամբ է ձևակերպվել հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր
Հակոբ Հակոբյանի ստեղծագործությունը դեռևս ռևոլյուցիայից շատ առաջ։
Նրա ազդեցությամբ ուժեղ է եղել այն երիտասարդ գրողների վրա, որոնք հա-
մախմբված էին Հ. Հակոբյանի շուրջը և հայ գրականության այլ առաջավոր
գրողների վրա։

Հայ անվանի վիպագիր Երովանյանի ժամանակին հետևյալն է գրել
Մաքսիմ Գորկով, նրա «Մանկություն» ստեղծագործության առթիվ. «Ձեռք մեծ
գրքի գլխավոր արժանիքը այդ համամարդկայնությունն է։ Իսկ մյուս գլխավոր
արժանիքը կախարդող արվեստն է»։

Մ. Գորկին և Վ. Բրյուսովն իրենց նախածնունդով և եղբայրական

ազակցութեամբ, գործով ցուց տվին, որ առաջավոր ռուս զորքները, ամսացու-
լիով ռուս ժողովրդի տրամադրութիւնները, ընդհանուր ուշիշ լուսնն ցարկզ-
մի ազգային ճնշման հետ: Ռուս առաջավոր զորքների բարկամտութիւնը հայ
զորքների հետ, մի տեսակ խորհրդանիշ էր հանդիսանում ռուս և հայ ժողո-
վուրդների բարեկամութեան:

Այդ բարեկամութիւնն աճել ու ամրապնդվել է բանվոր դասակարգի սեռ-
լուսնի շարժման հիման վրա, սյուրիստրական ինտերնացիոնալիզմի ոգով,
որի կրողները հանդիսացել են բուլնիկները:

Հայ ժողովրդի լավագոյն զավակներ Ստեփան Շահաբյանը, Սուրեն
Սպանդարյանը, Անաստաս Միկոյանը և ուրիշները, բուլնիկյան զարթոյնն ան-
դնէ են ի. Վ. Ստալինի ղեկավարութեամբ և զարկել կոմունիստական պար-
տիայի ականալոր գործիչներու:

Բուլնիկներն էին, որ դարձան ռուս ժողովրդի ռեկուլցիոն կուլտուրայի
ընթացքի արտադրանքները, բուլնիկներն էին, որ պաշտպանում էին Մ. Գոր-
կուն բուրժուական ընթացատութեան հարձակումից, հայտարարելով նրան
պարտաւարական գրականութեան փառք ու պարծանք և, ընդհանրապէս,
առաջավոր ռուսական գրականութեանն ու դիտութեանն՝ ընդդէմ համառու-
սական ռեակցիայի:

Հայ ժողովուրդն իր փրկութիւնը և ալկալիկ վերածնութեան հետաւոր-
ութիւնը տեսնում էր ռուս ժողովրդի օգնութեան ու նրա ռեկուլցիոն կուլ-
տուրայի մէջ և լսեալաց:

Սովետական շրջանում նոր ձեռք դրվեց ռուս գրականութեանից սովորելու
հարցը: Ռուս մեծ կուլտուրայի և ռուս սովետական զորքների ստեղծագործու-
թիւնը հատուկ սիրով է ընկալում հայ ընթերցողների կողմից: Սովետահայ
լավագոյն զորքները հպարտ են հայ ընթերցողներին իւրեքընեք տարեկան գրա-
կանութեանը, որի հոսքերից մի ամբողջ դար շարունակ սնունդ է առել և այժմ
էլ շարունակում է սնունդ առնել հայ ժողովրդի գրականութեանը: Սովետահայ
գրականութիւնը շատ բանով է պարտական սովետական գրականութեանն առա-
ջավոր շուկային, ռուսական սովետական գրականութեանը: Ռուս սովետական
ակնաւոր զորքներ Գորկու, Մայակովսկու, Յուրմանովի, Սերաֆիմովի, Դեմ-
յան Բեդու, Գլադկովի, Ֆադեևի ստեղծագործութեան ազդեցութեան տակ
ձեռնարկեց Հայաստանի երիտասարդ սովետական գրականութիւնը: Այժմ
այնպիսի զորքներ, ինչպէս Գորկին, Մայակովսկին, Շոքոխովը, Ալեքսեյ Տոլ-
ստոյը, Ֆադեևը, Ն. Օստրովսկին և շատ ուրիշ ռուս զորքներ, գրամատուրգներ
ու ընթաստեղծներ լայն կերպով ծանոթ են հայ ընթերցողներին: Դրա հետ
միասին սովետական ռուս զորքների շանքերով ու միայն հայ կուսակ գրակա
նութիւնը, այլև սովետական հայ գրականութեանն ալիք ընկնող երկերը թարգ-
մանվել են ռուսերեն, դառնալով Սովետական Միութեան բոլոր ժողովուրդնե-
րի սեփականութիւնը:

Հայ հեղինակների գործերից ու մի ժամանակ այնքան շատ չի թարգման-
վել ռուսերեն, որքան սովետական շրջանում: Այս փաստը խոսում է այն մա-
սին, որ հայ գրականութիւնը, միուս հղքարարական ժողովուրդների գրականու-
թեան նման, դուրս է գալիս ազգային նեղ սահմաններից և ռուսական լեզվի
միջոցով մտնում է համաշխարհային կուլտուրայի գանձարանը, հարստաց-
նելով այն:

Մեր աշխարհը, — ասում է ընկեր Վ. Մ. Մուրտուքը, — տեղի է ունենում

ու միայն ազգային կուլտուրաների վերելք, այլև այդ կուլտուրաների մեր-
ձեցումը:

Այս փաստերը բավական են հաստատելու այն բացառիկ կարևոր դերը,
որ խաղաղքն է խաղում է ռուս առաջավոր կուլտուրան հայ ժողովրդի և նրա
կուլտուրայի զարգացման գործում: Միայն դաշնակցական գրականքը, որոնք
վաղուց վաճառվել են անգլո-ամերիկյան խմբիթալիստներին, համագործակ-
ցելով հայ ժողովրդի զարավոր ինքնամի թյուրք փաշաների հետ, ճգնում են
միտել ռուս ժողովրդի անշահախնդիր օգնությունն ու օժանդակությունը հայ
ժողովրդին՝ նրա ազատագրության և սովետական կուլտուրայի զարգացման
գործում:

Մինչդեռ ռուս զրահանության այդ բարերար ազդեցության փաստի մեղ է
գտնվում հայ նոր ու նորագույն գրականության ուժի աղբյուրը, նրա ազգային
ինքնատիպության կարևոր նախապայմաններից մեկը:

Հայ ժողովուրդը կարող է պարծենալ իր ազգային կուլտուրայով և հաս-
կապեն դարերի ընթացքում ստեղծված հարուստ գրականությանը:

Դա այն կարևոր լուսն է, որ հայ ժողովուրդը մոռնել է համաշխար-
հային գրականության զանաքանը, հարստացրել է այն իր ազգային առանձ-
նահատկություններով:

Սովետական մարդիկ գտնում են,— ասում է Ի. Վ. Ստալինը,— որ յու-
րաքանչյուր ազգ, միևնույն է՝ մեծ թն փոքր, ունի իր սրահկան առանձնահատ-
կությունները, իր սպեցիֆիկությունը, որը պատկանում է միայն նրան և որ մյուս
ազգերը չունեն: Այդ առանձնահատկությունները հանդիսանում են այն ալման-
դը, որ յուրաքանչյուր ազգ մտցնում է համաշխարհային կուլտուրայի ընդհա-
նուր գանձարանը և այն լրացնում է, հարստացնում: Այդ իմաստով բոլոր
ազգերը — թն փոքր թն մեծ — գտնվում են միևնույն վիճակում և ամեն մի
ազգ համազոր է ամեն մի այլ ազգի:

Մեր մեծ առաջնորդի և ուսուցչի այս խորիմաստ միտքը պետք է դնա-
վար սկզբունք և ուղեցույց հանդիսանա հայ գրականության պատմության
ուսումնասիրության համար: Զինված ստալինյան այդ գրույթով պետք է վեր
հանվի այն նոր և խոշոր հարստությունը, այն սպեցիֆիկը, որ հասուն է հայ
գրականությանը (և ընդհանրապես հայ կուլտուրային) և որով այդ գրակա-
նությունը լրացնում ու հարստացնում է համաշխարհային կուլտուրայի ընդ-
հանուր գանձարանը:

Ժամանակին նացիոնալիստական գրականագիտությունը միտել է ասել
էլ ժխտում է ռուս գրականության բարերար ազդեցության փաստը հայ գրա-
կանության ու կուլտուրայի զարգացման գործում և անտեսում է պատմական
այն առանձնահատկությունները, որում գտնվել է հայ գրականությունը՝ Ռու-
սաստանում և Տաճկաստանում: Հավասարության նշան դնելով հայ գրակա-
նության երկու ճյուղի միջև և անտեսելով նրանց զարգացման տարբերու-
թյուններն ու առանձնահատկությունները, նացիոնալիստական քննադատու-
թյունը, հետապնդում էր նպատակ՝ ժխտելու ռուս կուլտուրայի բացառիկ
կարևոր դերը հայ ժողովրդի կյանքում: Նկատի ունենալով հարցի կարևորու-
թյունը, անհրաժեշտ է մի փոքր կանգ առնել դրա վրա:

Հայ ժողովուրդը, որն ապրել է մի տերիտորիայի վրա և ունեցել է իր միասնական զբաղակալությունն ու զբաղան լեզուն, խոսել է միմյանց համար հասկանալի ժողովրդական բարբառներով,— այդ ժողովուրդը պատմական մի շարք պատճառների շնորհիվ զրկվել է իր սնտական անկախությունից և բռնի կերպով բաժանվել է հատվածների, մասնատվել հարևան ուժեղ պետություններին կողմից։ Սկսած 16-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը, օսմանական կարգերի հաստատումը, հայ ժողովուրդը բաժանված է եղել երկու հատվածներին—Արևելյան Հայաստանի և Արևմտյան Հայաստանի։ Ըստ որում Արևելյան Հայաստանը մինչև 19-րդ դարի սկիզբը գտնվել է պարսկական լծի տակ, իսկ Արևմտյան Հայաստանը՝ թյուրքական։ Եւայ ժողովրդի պատմության ասալին գրքի մեջ քաղական համոզեցուցիչ կերպով պատմվում է այն ժանր պայմանների մասին, որի մեջ գտնվել են հայ ժողովրդի այդ երկու հատվածները՝ Արևելյան և Արևմտյան Հայաստանում։

Բայց իրադրությունը փոխվում է, երբ 1828 թվից սկսած Արևելյան Հայաստանը միացվում է Ռուսաստանին։ Ռուսաստանը համեմատած շահական Պարսկաստանի ու Եղիմյանական Թյուրքիայի հետ գտնվում էր տնտեսական, քաղաքական ու կուլտուրական տնայնեցից անհամեմատ բարձր աստիճանին վրա։

Ռուսաստանը,— գրում է Էնգելսը,— իրոք պրոգրեսիվ դեր է խաղում Արևելքի նկատմամբ։ Այս ամբողջությունը վերաբերում է նաև Հայաստանին։ Իսկ Մարքսը նշում է, որ Թյուրքիան գտնվում էր ֆեոդալիզմի ամենաքաղաքական ու կուլտուրական աստիճանին վրա։

Սկսած 19-րդ դարի առաջին տասնամյակներից, հայ ժողովրդի երկու հատվածները ապրում են քաղաքական-տնտեսական ու կուլտուրական բեր պայմաններում։ Ժողովրդի այս մասնատումը եղել է դառն իրականություն և պատմական մեծ ժողովրդային հայ ժողովրդի կյանքում։ Սակայն այդ բռնի, արհեստական մասնատումը երկու տնտեսական, քաղաքական ու կուլտուրական տարբեր մակարդակի վրա կանգնած պետությունների միջև, չէր կարող իր ազդեցությունը չունենալ հայ ժողովրդի այդ երկու հատվածների պատմական ճակատագրի վրա ու նրանց ստեղծած կուլտուրայի ու գրականության վրա և ունեցել է։

Եթե հայ ժողովրդի Արևելյան հատվածի ճակատագրի, սկսած 1828 թ., կապվեց ռուս մեծ ժողովրդի հետ և նա ապրեց վերջինիս հետ միասին մի քաղաքական կյանքով, կրելով ռուս ժողովրդի պայքարի ու առաջավոր կուլտուրայի առնչական ու բարերար ազդեցությունը, ապա այլ պայմաններում էր գտնվում արևմտահայությունը Տաճկաստանում և ողբերգական ճակատագրի ունեցավ նա։ Այն ժամանակ, երբ տաճիկ բարբարոսները անգլո-ամերիկյան իմպերիալիստների հովանավորությամբ քնաչնչում էին հայությունը և հայ կուլտուրան Տաճկաստանում, Նույն այդ ժամանակ միասնական հակառակ բայտ վիճակվեց ռուսահայերին։ Վերջիններս, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, Հոկտեմբերյան Ռեյոլուցիայի շնորհիվ, ձեռք բերին ազգային պետականություն՝ սովետական կարգերի հիման վրա։ Հայ ժողովրդի այդ երկու հայրենիքի զբաղակալության տարբերությունը, լնայած նրա ընդհանրության, զգալի է և այդ մասին ժամանակին գրել է նաև Վ. Տերյանը, Վերջանը և թերի լինի ռուսահայերի զբաղակալությունը,— գրում է Տերյանը,— նա իր մեջ առողջ զարգացման

ալիքի տարրերն է պարունակում, ճան պոլսականք... Ընդ որակապահանջում, սրտաբան անկեղծությունն նույնիսկ ամենաթույլ ազդեցությունը ամենի ընդունակ է մեր գրականությանը կենդանություն ու կենսականություն ներշնչելու, ճան այն բոլոր ծառայությունները, որ անում են թնայեւ և շատ շնորհալի պոետներ, անվանելով այդ վերադարձ գեղի հայկական հին կրոնը, հիմնադրությունը» (Երկեր, հատ. 4 էջ 183):

Անտեսել այս պատմական իրողությունը, նշանակում է մեծ սխալ կատարել: Ձէ որ այդպիսի դառն ճակատագիր է վիճակվել ոչ միայն հայ ժողովրդի անցյալում, այլև հարևան ու եղբայրական այլ ժողովուրդներին: Պարտալի 18-րդ համագումարում Ի. Վ. Ստալինն իր եզրափակման խոսքում անդամադրելով ազգային լեզուների հարցին, խոսում է Սովետական Միության կազմի մեջ մտած մի շարք ազգերի զարգացման պայմանների յուրաքանչյուրի մասին. ՍՍՍՌ-ի կազմում կա Ուլբախնա: Բայց կա նաև ուրիշ Ուլբախնա, որի մասին խոսում է Սովետական Միության կազմի մեջ մտած մի շարք ազգերի զարգացման պայմանների յուրաքանչյուրի մասին. ՍՍՍՌ-ի կազմում կա Ուլբախնա: Բայց կա նաև ուրիշ Ռեյտոնախնա՝ ուրիշ պետությունների կազմում: Կարո՞ղ է եզրափակել, որ Ուլբախնական ու Ռեյտոնական լեզուների հարցը կարող է լուծվել առանց այս յուրօրինակ պայմանները հաշվի առնելու:

Վերջինսնց աշխատանքն ՍՍՍՌ-ի այն ազգությունները, որոնք տեղափոխված են նրա հարավային սահմանի ուղղությամբ՝ սկսած Ազրբեյջանից մինչև Ղազախստան և Բուրյատ Մոնղոլիա: Նրանք բոլորն էլ գտնվում են նույն դրության մեջ, ինչ որ Ուլբախնան ու Ռեյտոնախան, Հասկանայի է, որ այստեղ հարկ կլինի ուշադրության առնել այդ ազգերի զարգացման պայմաններն յուրաքանչյուրի մասին (Ի. Ստալին, Երկեր, հատ. 13, էջ 8, ընդգծումներն իմն):

Հարգացման այդ յուրահատկությունն ունեցել է ու հայ ժողովուրդը: Անտեսել այս հանգամանքը, նշանակում է մեղանշել պատմական փաստերի առաջ և թույլ տալ սխալ մոտեցում պատմական երևույթներին:

Ժողովրդի և նրա գրականության բաժանումը երկու հատվածների ճշել է պատմական փաստ և, շնայած նրանց բոլոր ընդհանուր կողմերին, ունեցել են կարևոր տարբերություններ ու առանձնահատկություններ: Այդ տարբերությունները պետք է նկատել ունենալ ոչ թե երկու հատվածների գրականությունը հակադրելու համար — ոչ, այլ երկու հատվածների գրականությունն էլ մեր ժողովրդին է, կազմում է նրա կուլտուրական ժառանգությունը, մենք այդ ժառանգությունից երբեք չենք հրաժարվում: Խոսքն այստեղ վերաբերում է զարգացման առանձնահատուկ ընկալիչ բացատրելուն, հասկանալուն, այդ երկու հատվածների ստեղծած գրականությանն: Դա մասնիկները գնահատելու:

Հայ ժողովրդի պատմության նախնական կոնցնպիան, որն անողոք քննադատել է Ստեփան Եսահյանը, ելնում է այն սկզբունքից, թե Հայաստանը հին և միջին դարերում ներկայացրել է մի ամբողջական պատմական-հասարակական մարմին, որ և նա իման է եղել ժամանակակից ամբողջական ազգային պետությունների, ինչպես, օրինակ, Թուրքիան, Գերմանիան և այլն: Միևնույն ժամանակահատվածում կոչվածը, — դրոմ է Եսահյանը, — անբերկայացնելու է եղել իրոք բազմաթիվ ինքնուրույն պետական մարմիններ տարբեր տեղանքական վիճակով, տարբեր սոցիալական հարաբերություններով, հետևաբար տարբեր շահերով... Վ. Փափաղյանը և մյուսները, որոնց համար կա միայն ժամանակահատված բառը և ամենի ոլորտ, իհարկև չեն կարող ուղիղ տեսնել նրա

առանձին ինքնուրույն մասերի ներքին դասակարգայնս ցարգար և դասակարգային կռիվների մասինն (Ընտիր ծրկնր, էջ 350)։

Այսպես է նացիոնալիստական պատմագրության ելակետը ու էությունը. նա ելնում է ժնայաստանն կոչվածի միասնությունից, ընդհանրությունից, և հաշվի չի առնում նյա առանձին ինքնուրույն մասերի տեսնասկան վիճակը, սոցիալական հարաբերությունները ու դասակարգային պայքարը և այդ պայքարով պայմանավորված կոստուրայի ու գրականության զարգացման առանձնահատկությունները։ Այս կոնցնպցիայի պաշտպանների մտքով իրոք չի անցել և յի էլ անցնում այն զոգափարը, թն կիլիկիայի հայկական թագավորությունը, որ ճղել է ձայաստանի մի ինքնուրույն մասն իր տարբեր տեսնասկան վիճակով ու սոցիալական հարաբերություններով, կարոլ էր, դրա հաժապատասխան, ստեղծել և իր գրականությունն ու ուրվեստը, որը շատ կոդմբով տարբեր է եղել ձայաստանի մյուս ինքնուրույն մասերի գրականությունից ու արվեստից։

Նույնը պետք է ասել և նոր շրջանի մասին։

Մարքսիստ պատմագրի կամ գրականագետի խնդիրն է ցույց տալ ձայաստանի առանձին ինքնուրույն մասերի և նրանց կոստուրայի զարգացման առանձնահատկությունները, նրանց ընդհանրությունն ու տարբերությունները։

IV

Արևմտահայ գրականությունը սուլթանների ու նրանց հայրողների արուեսարքու թաղաքականության շնորհիվ ոչ միայն չէր կարող զարդանալ, այլ աստիճանաբար դնգրադացիայի, քաջաշման ենթարկվեց, ի վերջո կորցրեց 60—80-ական թվականների համեմատական արժանիքները և հասարակական ու գրական կշիռը ընդհանուր հայ գրականության պատմության մեջ, այն կշիռը, որը պայմանավորված է Պ. Պեշիկթալլանի, Պ. Դուրյանի, Զ. Պարոնյանի, Մերենցի Նման գրական դեմքերի հանդես գալով։

Մինչդեռ հակառակ երևույթ ենք նկատում Ռուսահայաստանում։ Ռուսաստանին միացվելուց կարճ ժամանակ հետո, այստեղ հանդես եկավ մի խոշոր լուսավոր դեմք — դեմոկրատ ինչաստուր Արուսյանը, որը ներշնչված ռուս առաջավոր եկատուրայով, հիմք դրեց հայ նոր գրականությանը և գրական լիզիվին՝ նա ժամանակին ճիշտ ըմբռնեց Ռուսաստանին փրանալու հայերի պատմական ձգտման անհրաժեշտությունն ու առաջադիմական բնույթը և ամբողջ հոգով ողջունեց այդ միացումը։

Սկսած ևս. Արուսյանից հայ գրականությունը Ռուսահայաստանում ապրեց վիթխարի վերելք և իր զարգացման մեջ դարձավ առաջավոր ու իրենով որոշեց հայ գրականության հիմնական դիմանկարը, ազդելով հայ գրականության մյուս հասավածների ու խմբերի գործունեության վրա։ Ռուսահայաստանում զարգացած հայ գրականությունը, գրավեց իշխող և ազդեցիկ դիրք, առաջադրեց մեծ հրապարակախոսների, գրողների ու քանաստեղծների մի այնպիսի սերունդ, որոնց համեմատությամբ շատ էին գիշում դարձվեցրի և դարենկզբի արևմտահայ գրականության ներկայացուցիչները։

Վերածննդված պատանները՝ Ռուսաստանում հասունացող սնույնցան, որ ներգրավել էր և հայ մասսաները, որու գրականության բարձրագույն ազդեցությունը, չէին կարող լիազար իրենց որշիլ գեղը հայ գրականության արագ զարգացման գործում։

Բնական է, որ այդ գրականությունն իր տարբեր զաղափարական ու քաղաքական հոսանքներով ու առանձին ներկայացուցիչներով, ամենից շատ է դարձել սուր և կատաղի պայքարի առարկա:

50—60-ական թվականներին հայ իրականության մեջ ձևակերպվում է երկու հիմնական դրական-քաղաքական հոսանք, ռևոլյուցիոն դեմոկրատական և լիբերալ-բուրժուական, որոնց շարունակում են իրենց պայքարը մինչև 90-ական թվականները և հետո: Ըստ որում, կղերա-ֆեոդալական հոսանքը՝ սպառնալից համարելով լիբերալիզմի հետ ունեցած ներքին վեճերը, գործակցում է նրան և հիմնական քաղաքական հարցերում միացյալ ճակատով հանդես է գալիս ռևոլյուցիոն դեմոկրատիայի դեմ:

Պատկերը փոխվում է, երբ Ռուսաստանում, այդ թվում և Անդրկովկասում, պատմական բեմ է հանդես գալիս պրոլետարիատը, բանվոր դասակարգը իր մարզախաղաղական-ինտերնացիոնալիստական աշխարհայացքով:

Վ. Ի. Լենինն իր աշխատություններից մեկում («Ճանաթվաճառ» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ)՝ խոսում է երեք հիմնական զաղափարա-քաղաքական հոսանքների գոյության մասին, որոնք ընդողում են 90-ական թվականներին Ռուսաստանի հասարակական կյանքը և համապատասխանում են գոյություն ունեցող երեք հիմնական դասակարգերի ձգտումներին, դրանք են լիբերալ-բուրժուական, մանր բուրժուական և դեմոկրատական և պրոլետարական — ռևոլյուցիոն (Լենին, Երկեր, հատոր 31, էջ 10):

Լենինյան այս սահմանումը, որը նկատի ունի միայն հիմնական հոսանքները, լիովին կարող է վերաբերվել և ուսանահայ իրականությանը, նրանում գործող զաղափարական-քաղաքական հոսանքներին:

Հայ գրականության պատմության գիտական ուսումնասիրությունն համար ահմեջտ է նրա զարգացման այդ էական հանգամանքները հաշվի առնել, տեսնել այն տարբերությունը, որը կար ասենք, պայքարող հոսանքների միջև 60-ական թվականներին և 90-ական թվականից հետո:

60—80-ական թվականներին պայքարը գնում էր հիմնականում դեմոկրատիզմի (այս թվում և նրա թարձրագույն արտահայտությունը հանդիսացող Միջաշխի նալրանդանի ռևոլյուցիոն-դեմոկրատիզմի) և բուրժուական լիբերալիզմի միջև, որի հիմնական դեմքերն այդ պատմաշրջանում հանդիսանում էին Սո. Նալարյանը և Գ. Արծրունին:

Վերջիններս բուրժուական լիբերալիզմի դիրքերից քննադատության էին ենթարկում, թեև անհեռևողական, ֆեոդալ-կղերական այն ինստիտուտներ՝ զբարարը, եկեղեցին և այլն, որոնց իրենց արդի վիճակով խոչընդոտ էին ստեղծում երկրի բուրժուական զարգացման առհես, և պահանջում եկեղեցուց թարեփոխություններ ու աշխարհաբարին անցնելու սկզբունք: Սա ներքին պայքար էր իշխող դասակարգերի միջև, բայց հիմնական-քաղաքական հարցում լիբերալիզմն ու կղերա-ֆեոդալական հոսանքը փաստորեն զանակցում էին դեմոկրատիայի ու ռևոլյուցիայի դեմ:

Նշելով հանդերձ բուրժուական լիբերալ գործիչների, հա-իկապես Սո. Նալարյանի և Գ. Արծրունու տիպի, պատմականորեն պրոգրեսիվ գծերը՝ կղերա-ֆեոդալական իդեոլոգիայի համեմատությամբ, մենք պարտավոր ենք թեևադատել նրանց զորեղությունը և աշխարհայացքի ուսկցիոն ընդլթը, որն արտահայտվել է դեպի սոցիալիզմը և ռևոլյուցիոն շարժումն ունեցած թշնամանքի մեջ, մատերիալիզմի փխտման ու իգնալիզմի պաշտպանության,

ևևոյլուցիոն տակտիկայի դատապարտման ու մանր ռեֆորմների փառաբանութեան մէջ:

Գեմնիկադիզմի և լիբերալիզմի այդ հակադրութեան մասին լրիվ պատկերացում է տալիս այն պայքարը, որ տեղի է ունեցել ռեւոլյուցիոն-դեմոկրատ Մ. Նալբանդյանի և լիբերալ Ստ. Նազարյանի միջև: Հակառակ լիբերալիզմի սահմանափակութիւնը և մանր ռեֆորմներին սկզբունքին, Նալբանդյանը հայ ժողովրդի ազատագրութեան սերտորեն կապեց ռուս մեծ ժողովրդի ազատագրական պայքարի հետ և ինքն էլ հասնեց եկամբ որպէս ռուս ռեւոլյուցիոնիստների զինակից ու բարեկամ: Նրա անձնական կապերն ու բարեկամութիւնը Գեորգիի ու Օգարյովի հետ, զինակցութիւնը՝ Զերնիշենսկու և Դոբրոլյուբովի հետ՝ ժողովուրդների ազատագրութեան ու առաջավոր մատերիալիստական աշխարհայացքի պաշտպանութեան գործում՝ հայ դեմոկրատին դարձնում են համառոտապակե մտաւոր բերք: Հասկանալի է այն խոշոր ազդեցութիւնը, որ Նալբանդյանն ունեցավ իր և հետագա շրջանի առաջավոր հայ գրականութեան զարգացման վրա, այդ թվում և արեւմտահայ գրականութեան, որտեղ նա ստեղծեց իրեն հետեւողների խմբակ, դեմոկրատ-հրապարակախոս, Եմիլիոս Թերթի խմբագիր Է. Սվաճյանի գլխավորութեամբ:

Միևնուրեք լիբերալ-բուրժուական և նացիոնալիստական քննադատութիւնը (Լեոն և Ռուշէնբեր) ամեն կերպ աշխատում էին օքոզել լիբերալիզմի ու դեմոկրատիզմի միջև եղած պայքարը, Նալբանդյանին համարելով Նազարյանի աշակերտ ու զինակից:

